ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» Հոկտեմբերի 2017 թվականի № 139-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի ՀՀ Բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 90 և 2017 թվականի հոկտեմբերի 03-ի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2163 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ Ֆ-318/17 գրությունը, «ԱԲԻԼ» ՍՊ ընկերության 2017 թվականի օգոստոսի 29-ի թիվ 2 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱԲԻԼ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/572 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի և տուֆերի հանքավայրի Հառիճի տեղամասի (այսուհետ՝ ընդերքի տեղամաս)՝ 1.X=4498865 Y=8415833, 2.X=4499034 Y=8415894, 3.X=4499152 Y=8415985, 4.X=4499161 Y=8416120, 5.X=4499135 Y=8416175, 6.X=4498957 Y=8416225, 7.X=4498814 Y=8416098 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 447852մ^3 տուֆի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-572 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4498865 Y=8415833 H=1947.5 (h=0), 2.X=4498940 Y=8415844 H=1942.0 (h=0), 3.X=4499034 Y=8415894 H=1950.8 (h=0), 4.X=4499152 Y=8415985 H=1950.8 (h=0),

5.X=4499161 Y=8416120 H=1965.2 (h=0), 6.X=4499135 Y=8416175 H=1965.2 (h=0), 7.X=4498957 Y=8416225 H=1965.2 (h=0), 8.X=4498814 Y=8416098 H=1950.5 (h=0), 9.X=4498826 Y= 8415868 H=1950.7 (h=0), 10.X=4498836 Y=8415858 H=1949.0 (h=0), 11.X=4498853 Y=8415876 H=1945.8 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 9.9 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 8088.2 մ^3 տուֆի մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 572 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի և տուֆերի հանքավայրի Հառիճի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 572 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ